ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ՎԱՐՉԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վասպուրականը, որպես վարչաաշխարհագրական միավոր, ունեցել է պատմական զարգացման տարբեր փուլեր։ Վաղ շրջանում նրա սահմանները անհամեմատ ավելի փոքր են եղել, քան այն, ինչ ներկայացված է VII դարի Աշխարհացույցում։ Արտաշիսյանների և Արշակունիների օրոք Վասպուրականը համեմատաբար փոքր միավոր էր, որն ընդգրկում էր հետագայում (591 թ. հետո) կազմավորված Վասպուրական նահանգի Աղիովիտ և Առբերանի (նաև Հաշտյանք) գավառները։ Այսպիսի եզրակացության կարելի է հանգել հենվելով Մովսես Խորենացու տվյալների վրա։ Հայտնի է, որ հայոց Արշակունիների տոհմում արմատացած սովորության համաձայն, Այրարատում բնակվելու իրավունք ունեին միայն հայոց թագավորը և նրա թագաժառանգ որդին։ Թագավորի մյուս որդիներին՝ արքայատոհմի սեպուհներին, արգելված էր Այրարատում բնակվել. նրանց ի սեփականություն էին տրված հետագայի Վասպուրական նահանգի Աղիովիտ և Առբերանի գավառները, նաև Հաշտյանքը։ Հայոց թագավոր Արտավազդ II-ը, հավաստում է Մովսես Խորենացին, «ժառանգեցուցանէ զեղբարս իւր և զքորս ի գաւառս Աղւո ովտի և Առբերանոյ, թողով ի նոսա զմասն արքունի որ ի շէնսն այնց գաւառաց, հանդերձ առանձինն մտից և ոռճկաց, ըստ օրինակի ազգականացն որ ի կողմանս Հաշտենից. որպէս զի լինել նոցա պատուականագոյն և առաւել թագաւորազն քան զայնս Արշակունիս. միայն օրինադրէ ոչ կեալ յԱյրարատ ի բնակութիւնս արքայի»[1]։

Ուշագրավ է նաև պատմագրի մեկ այլ վկայությունը. «Յետ Արտաշիսի թագաւորէ Արտաւազդ որդի նորա, և հալածէ յԱյրարատոյ զամենայն եղբայրս իւր ի գաւառս Աղիովտայ և Առբերանոյ, զի մի բնակեսցեն յԱյրարատ ի կալուածս արքայի»[2]։

Արշակունիների օրոք այս սկզբունքը չխախտվեց։ Տիրան թագավորի ժամանակ արքունի սեպուհական տիրույթներում բնակվողների թիվն այնքան է ավելացել, որ թագավորն ստիպված է եղել նրանց հողերը վերաբաժանել ըստ մարդաթվի, որպեսզի արքունի տան մյուս սեպուհներն էլ հողեր ստանան Առբերանի և Աղիովիտ գավառներում[3]։ Արշակ II-ի ժամանակ այդ սկզբունքը երբեմն խախտվել է, սակայն թագավորը մահվան սպառնալիքով հարկադրել է հավատարիմ մնալ ավանդական կարգին[4]։

Պատմահոր այս վկայություններից երևում է, որ Աղիովտում, Առբերանիում, Հաշտյանքում բնակվող արքունի տան սեպուհները օժտված են եղել «պատուականագոյն», «առաւել թագաւորազն» առանձնաշնորհումներով։ Հնարավոր է, որ այդ գավառները ի տիրություն են տրվել պայմանական հողակալության հիմունքներով, սակայն այս դեպքում ևս չէր փոխվում նրանց՝ որպես արքունի տան առանձնաշնորհյալ անդամների (սեպուհների) հողատիրական իրավունքների բնույթը։ Բնական է, որ նշված հողատիրությունները համապատասխանաբար կարող էին կոչվել սեպուհական կամ Վասպուրական համանշանակ անուններով, որոնք հայերենին են փոխանցվել հին պարսկերենից։

---

1 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղյան և Ս. Հարությունյան. Տրիդիս, 1913, II, ԻԲ, էջ 137։

2 Նույն տեղում, II, ԿԱ, էջ 191։

3 Նույն տեղում, II, ԿԲ, էջ 192։

4 Նույն տեղում, III, ԻԲ, էջ 282—283։

«Սեպուհ» («տոհմի որդի») հասկացությունը ծագում է զենդերեն «վիսոպուդրա» (կամ «վիսահպուդրա») բառից, որն ունի «իշխանական տոհմի որդի» իմաստը կամ պահլավերեն «վիսպուր», «վիսպուս» («իշխան») բառերից։ Ն. Յա. Մառի կարծիքով «վիսո-պուդրան» հայերենում պիտի դառնար «վիսահպուհ» կամ «վիսեպուհ», որը կորցնելով առաջին վանկը, դարձել է «սեպուհ»։ «Սեպհական»-ը պարթևական շրջանում պահլավերենում կոչվել է «վիսեպուրական», որն ունի «հատուկ», «մասնավոր», «անհատական» իմաստը։ Ըստ այդմ հայերեն «սեպհական» բառն ստեղծվել է ոչ թե սեպուհ բառից, այլ փոխառնված է պարթևերենից և նույնական է վիսեպուրականին[6]։ Ա. Փերիխանյանի կարծիքով վասպուր հասկացությունը չունի արքայազն բառիմաստը, այն նշանակում է «հատուկ, մասնավոր դիրք ունեցող», որպիսին կարող էին լինել թագաժառանգը, ինչպես և արքայատոհմի մյուս անդամները։ Հենց վասպուր բառից էլ առաջացել է Վասպուրական անունը, որը նշանակում է. ա) հատուկ դիրք ունեցող անձինք, որոնք մոտիկ էին կանգնած արքային, այլ խոսքով՝ պետության բարձրագույն վերնախավը, բ) թագավորի «հատուկ, մասնավոր ունեցվածքը», «անձնական կալվածքը»[7]։ Հ. Հյուբշմանի կարծիքով պահլավերենում վասպուրական բառի տակ հասկացվել է բարձր ազնվականությունը, առանձնապես Իրանի նշանավոր յոթ տոհմերը[8]։ Նկատենք, որ Ագաթանգեղոսի մոտ «սեփհական» բառը ունի «ազնվական» իմաստը[9]։ Որոշ ուսումնասիրողներ Ստրաբոնի հիշատակած Բասորոպեդիա տեղանունը նույնացնում են Մեծ Հայքի Վասպուրական նահանգի հետ, որը, սակայն, չի հիմնավորվում։ Ստրաբոնը Բասորոպեդիայի տակ թերևս նկատի ունի Վասպուրական անունը, սակայն բոլորովին այլ երկրամասում. դատելով իր իսկ տվյալներից, հավանաբար, Ատրպատականում։ Նման ենթադրության համար կվան կարող է ծառայել Ստրաբոնի այն վկայությունը, որի համաձայն հայոց Արտաշես I թագավորը Բասորոպեդիան գրավել է մեդացիներից՝ Կասպիանեի և Փավնիտիսի հետ[10]։ Այս տեսակետից ուշագրավ է, որ Փավստոս Բուզանդի վկայությամբ, Ատրպատականում եղել է հայոց արքունի կալվածք[11], որը, հավանաբար, ունեցել է վասպուրական համարվող տիրույթների ստատուս։ Ընդ որում Վասպուրական անունով տեղանուններ հիշվում են նաև ուրիշ երկրամասերում։ Այսպես, Իրանում, Սպահան քաղաքի շրջակա տարածքը Նախշի-Ռուստամի արձանագրության մեջ հիշվում է Վիսպուրական անունով[12]։ Սպահանի շրջակայքը արքունի ոստան էր, որից և առաջացել է նրա վասպուրական անվանումը։ Հետաքրքիր է, որ արաբ աշխարհագիր Իդրիսին Իրանի Վերկան նահանգում հիշում է Ասպուրական անունով բնակավայր[13], որն, անշուշտ, նույնական է Վասպուրականին։

Հայ մատենագրական աղբյուրներում հիշվող Մարդպետական երկիրը ներառնում էր հետագայում ձևավորված Վասպուրական նահանգի զգալի մասը։ Աղբյուրների տվյալներից երևում է, որ Մարդպետականը կոչվել է նաև Սեպ-

---

5 Н. Я. Марр. Этимология армянского սեպուհ и грузинского სეფე.—Записки восточного отделения имп. русс. Археологического общества, т. V, СПб., 1891, с. 288.

6 А. Периханян. Armeno-Iranica I. ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1965, № 11, էջ 90.

7 Նույն տեղում, էջ 91։

8 H. Hübschmann. Armenische Grammatik. Leipzig. 1895, S 80.

9 Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց, աշխ. Դ. Տեր-Մկրտչյան և Ստ. Կանայանց. Տփղիս, 1909, ԻԲ, էջ 132։

10 Страбон. География, изд. Г. А. Стратановский. Л., 1964, с. 498.

11 Փաւստոսի Բուզանդացւոյ պատմութիւն Հայոց. Ս. Պետերբուրգ, 1883, V, Ը, էջ 195։

12 А. Г. Периханян. Древнеармянские восталики.—Вестник древней истории, 1956, № 2, с. 52.

13 Geographie d'Edrisi, trad. par A. Jaubert. T. I, Paris, 1940, p. 460.

հական գունդ անունով, որը նույնական է Վասպուրականին։ Հետևաբար, վերջինս կոչվել է նաև Մարդպետական անունով։ Այս կարծիքը ուժ է ստանում դարձյալ Մովսես Խորենացու վկայությունների շնորհիվ, որոնց համաձայն հայոց հին թագավորների տոհմակիցներն ունեցել են պաշտպանական գործառնություն։ Հայոց Վաղարշակ թագավորը, գրում է պատմիչը, «գունդս և պահապանս դրան արքունի կարգէ ղչորս, զմի մի իւրաքանչիւր բիւրովք վառելովք ի նոյն ի հին ի զարմից թագաւորացն՝ որք ի մերոյ նախնւոյն ի Հայկայ, որք բուն ոստանն անուանեալ, որք ընդ ժամանակս ժամանակս ծառանգութիւն ի հարանցն ընկալեալ գիւղս և դաստակերտս»[14]։ Սակայն, ավելացնում է պատմագիրը, «աստ ուրեմն Պարսից թագաւորութեանն, որպէս լսեմ, այլս ոմանս յարուցեալ գունդս և ոստան անուանեալ. ոչ գիտեմ թէ վասն սպառելո՞յ ազգին առաջնոյ, թէ վասն ընդդիմութեան իրիք արդեօք չկապեալ և ի բաց ընկեցեալ զազգն՝ զայլս ի տեղի նոցա յարուցին գունդս՝ անուամբ արքունի։ Այլ առաջինն հաստատ ի զարմից թագաւորացն առաջնոց. որպէս և այժմ ի Վրաց աշխարհին, որ սէփեծուլն կոչի։ Նա և ներքինիս հրամայէ ի նոյն ազգէ իզել. և նահապետ նոցա զՀայր իշխան մասին յԱտրպատականէ մինչև ցՃուաշ է ցնախճաւան, և նահապետութեան ազգին սա մեծարոյ»[15]։

Մովսես Խորենացու այս վկայությունից երևում է, որ հին հայոց թագավորների սերունդներից կազմված են եղել արքունի դռան պահապան գնդեր, յուրաքանչյուրը տասը հազար հոգուց բաղկացած։ Թագավորական այդ զարմիկները կոչվել են «բուն ոստան» և իրենց հայրերից ժառանգություն են ստացել գյուղեր և դաստակերտներ։ Դժվար չէ կռահել, որ այստեղ խոսքը Արտաշիսյան արքայատոհմի սեպուհների մասին է, որոնք կոչվել են «բուն ոստան»։ «Ոստանը» հին հայերենում ունեցել է արքունի կալված իմաստը (նույն իմաստն ունի նաև պահլավերենում)։ Մովսես Խորենացին, ինչպես տեսնում ենք, ոստան է կոչում հենց արքունի տան անդամների կալվածները։ Իհարկե, արքունի դռան պահապան գնդերը, որոնց մասին, ինչպես տեսանք, հիշատակում է Մովսես Խորենացին, միայն արքունի տան անդամներից չէին համալրված, արքունի տոհմի սերունդներն այդքան մեծ թիվ չէին կարող կազմել։ Ուստի պետք է կարծել, որ պատմահայրն այստեղ նկատի ունի նաև արքունի տան հողատիրույթներում բնակվող մարդ ազատներին։ Խորենացու վկայությունից կարելի է հետևեցնել, որ «բուն ոստան» կոչված ազատանին ավագանու նոր տեսակ էր, որը իր դերի, պաշտպանական հույժ կարևոր գործառնության շնորհիվ օժտված էր յուրատեսակ իրավունքներով։ Պատմահոր այս վկայությունից հավաստվում է, որ թագավորական տնից սերած «ոստան» կոչվող ազատներին («ոստան ազատութիւն») Վիրքում կոչել են սեփեծուլներ, որը նշանակում է «թագավորի որդիներ» և նույնական է հայերեն սեպուհ բառին։

«Ոստան ազատութեան» մասին Մովսես Խորենացին հիշում է նաև այլ առիթներով։ Հայոց թագավոր Տիգրան Մեծը, հաղորդում է պատմագիրը, «յուղարկէ թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծաւ ամբոխիւ ի Հայս, յաւանն՝ զոր շինեաց յիւր անուն Տիգրան, որ և Տիգրանակերտ, և զգաւառն սայնոսիկ ի ծառայութիւն նմա հրամայէ։ Եւ զոստանն անուանեալ կողմանցն այնոցիկ ազատութիւն ի զարմից սորա ասէ լեալս, իբր թագաւորական զարմս»[16]։

Ինչպես տեսնում ենք, Խորենացին հայոց թագավորի քրոջից սերված ազատներին, որպես թագավորական տան շառավիղների, կոչում է «ոստան», որն այդպիսով ունի «արքայատոհմից սերած սեպուհներ» իմաստը։ Անշուշտ, պատմիչն այստեղ ի նկատի ունի նաև նշված գավառում եղած մյուս ազատնե-

---

14 Մովսես Խորենացի, II, է, էջ 111—112։

15 Նույն տեղում, էջ 112։

16 Նույն տեղում, I, Լ, էջ 82—83։ Ուշագրավ է, որ Դվինի 648 թ. ժողովի մասնակից Մարդպետականի եպիսկոպոսը կոչվում է կրկնակ՝ «Ոստան և Մարդպետական» վերագրիներով («Ղևոնդեանք Հայոց, աշխ. Վ. Հակոբյանի. Բ, Երևան, 1971, էջ 214)։

ին, որոնք ունեցել են թագավորական տան սեպուհների արտոնություններ։ «Ոստան ազատութիւնը» փաստորեն ավագանու յուրատեսակ մի խավ էր, որն օժտված էր հատուկ արտոնություններով։ Մովսես Խորենացին շեշտում է այդ ինստիտուտի («ոստան ազատութեան») պատմական հաջորդայնության փաստը, նշելով, որ հետագայում ստեղծվել են նաև ուրիշ գնդեր, որոնք նույնպես կոչվել են ոստան։ Սակայն եթե առաջին դեպքում «ոստան ազատութիւնը» սերում էր հին Հայաստանի թագավորական տոհմից, իհարկե, նաև նրանց վասալ ազատներից, ապա այլ ծագում ուներ հետագայում կազմավորված «ոստան ազատութիւնը», որը, ինչպես պատմագիրն է նշում, սերում էր Մարդպետական տոհմից և նրա գերակայությանը ենթակա ազատներից, որոնց տիրույթները տարածվել են Ատրպատականից մինչև Նախճավան։ Ուշագրավ այս վկայությունից ելնելով կարելի է կարծել, որ արքայատոհմի անդամների (սեպուհների) իրավունքներով օժտված են եղել նաև ֆեոդալական այլ տոհմերից՝ սերած ազատներ, տվյալ դեպքում Մարդպետների տան անդամները, որոնք կատարել են երկրի արևելյան սահմանների պաշտպանությունն ապահովող ռազմաքաղաքական հատուկ պարտավորություններ։ Նմանօրինակ առանձնաշնորհյալ կացության մեջ են եղել, անշուշտ, նաև Մարդպետների տոհմի իրավասության ոլորտում եղած հողատիրույթների հայրենատեր ֆեոդալները։ Այսպիսով, թագավորական տոհմի անդամների իրավունքներ են ունեցել ոչ միայն Առբերանի, Աղիովիտ և Հաշտյանք գավառների տերերը, այլև Մարդպետներին ենթակա ընդարձակ երկրամասի ֆեոդալական տիրույթների տերերը։ Ընդ որում Մարդպետների գերակայության տակ եղած գավառները հայկական սկզբնաղբյուրներում կոչվում են Մարդպետական հավաքական անունով, որը, որքանով մեզ հայտնի է, օտար սկզբնաղբյուրներում չի հիշվում, ինչպես որ չեն հիշվում Հայաստանի բազմաթիվ այլ տեղանուններ։ Ընդ որում II դարի հույն աշխարհագետ Կլավդիոս Պտղոմեոսը իր «Աշխարհագրական ձեռնարկում» նույնպես չի հիշում այս անունը։ Վասպուրականի տարածքում նա հիշատակում է միայն Տոսպը և Մարդոյեն[17] (μαρδοι), որը, դատելով հունարեն վերջավորությունից, պետք է լիներ ցեղանուն, տվյալ դեպքում՝ մարդ ցեղի բնակեցրած տարածքը։ Բնական է, որ Պտղոմեոսը պետք է հիշատակեր այն անունները, որոնք իրեն ծանոթ են եղել օտար, տվյալ դեպքում իրեն մատչելի հունա-հռոմեական սկզբնաղբյուրներից, որտեղ, ինչպես հայտնի է, քանիցս հիշվում են մարգերը։ Եթե ընդունենք, որ Պտղոմեոսը Մարդոյեի տակ նկատի ունի մարդ ցեղի բնակության շրջանը, ապա դժվար է ենթադրել, թե Վասպուրականի ողջ տարածքը ընդգրկվել է Մարդոյեի և Տոսպի մեջ։ Բ. Հարությունյանի կարծիքով Պտղոմեոսի օրոք և նրանից հետո երկար ժամանակ Վասպուրական աշխարհը բաժանված է եղել երկու մասի։ Ընդ որում մինչև Կարմիր գետը տարածվող արևմտյան Վասպուրականը կազմել է Տոսպ աշխարհը, իսկ Կարմիր գետից դեպի արևելք ընկած մասը՝ Մարդոյեն, որը նա նույնացնում է Մարդպետականի հետ[18]։ Մ. Խաչատրյանի կարծիքով Մարդոյեն տարածվել է Կոտայքի, Սյունիքի, Ուրմիա լճի և Տոսպի միջև ընկած ընդարձակ տարածությունում[19]։ Ստացվում է, թե իբր մարգերը բնակեցրել են այդ լայնատարած երկրամասը, որն, իհարկե, չի հաստատվում սկզբնաղբյուրներով։

Մարդոյեն, որպես ցեղանուն, բնական է, որ չի կարող նույնացվել Մարդպետականի հետ, որը հայտնի է միայն հայկական սկզբնաղբյուրներից և ներառնում էր ոչ միայն մարդ ցեղի բնակության շրջանները, այլև, ինչպես կըտեսնենք ստորև, մի քանի նախարարական տների հայրենակալվածքները։

---

[17] Claudii Ptolemaei Geographia. Vol. II, ed. C. Müllerus. Parisis, 1901, V, 12,9, p. 945.

[18] Բ. Ն. Հարությունյան. Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Ախարհացոյց»-ի.—«Բանբեր Երևանի համալսարանի», 1983, № 3, էջ 120։

[19] Մ. Մ. Խաչատրյան. Հայկական լեռնաշխարհն ըստ Պտղոմեոսի քարտեզագրական տվյալների.—«Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 2, էջ 208։

Այդ իսկ պատճառով Մարդպետական վարչաաշխարհագրական հասկացությունը հնարավոր չէ նույնացնել մարդ ցեղի բնակության շրջանների հետ։ Բացի այդ, պատմարեմից մարդերի վերացումից հետո պահպանվեց Մարդաստան գավառանունը, որը, իհարկե, տարբեր է Մարդպետականից։ Ուստի, եթե Մարդոյեն դիտենք նաև որպես աշխարհագրական որոշակի տարածք, ապա ավելի բնական կլինի այն նույնացնել Մարդաստանի հետ։ Բացի այդ, որովհետև Մարպետականը միայն մեկ տոհմի՝ Մարդպետների տիրությունը չէր, ուստի որպես աշխարհագրական հասկացություն այն հարատևեց նաև այդ տոհմի անկումից հետո։ Որ Մարդպետականի կազմում եղել են մի քանի նախարարական տների ժառանգական հայրենիքը հանդիսացող գավառներ, հավաստվում է Մովսես Խորենացու հաղորդմամբ, որի համաձայն Մարացյան տոհմն իշխում էր Նախճավանում և նրանից հյուսիս ընկած շրջաններում[20]։ Պատմագիրը Մարդպետականի կազմում հիշում է նաև Ամատունիների, Ակեացիների տիրությունները։ Այս վկայությունները թույլ են տալիս կարծելու, որ Մարդպետականի մեջ եղել են մի քանի տոհմերի հայրենակալվածքներ։ Այսպիսով, այդ ընդարձակ միավորի մեջ ընդգրկված տիրությունները ոչ թե մեկ տոհմի (Մարդպետների) իրավասության տակ էին, այլ մասնատված էին մի քանի ֆեոդալական իշխանությունների միջև, որոնց նկատմամբ, դատելով ըստ ամենայնի, Մարդպետները չեն ունեցել սեփականատիրական իրավունք, այլ օժտված են եղել լոկ ռազմաքաղաքական իրավազորությամբ, որի շնորհիվ նրանք միավորել են երկրամասի տարբեր տոհմերին և պաշտպանել Հայաստանի՝ Ատրպատականին հարող շրջանները։ Մարդպետականի ազատազորքը պաշտպանական իր կարևոր դերի բերումով, անշուշտ, ունեցել է առանձնաշնորհյալ կացություն, վերը նշված ոստան ազատների կամ արքունի տան սեպուհների իրավունքներ։ Ըստ երևույթին այս է պատճառը, որ «Գիրք թղթոց»-ում Մարդպետականը համապատասխանաբար հիշվում է նաև Սեպհական գունդ[21] անունով, որը նույնական է Վասպուրականին։

Հարկ է նշել, որ բացի Մարդպետականից, 591 թ. հետո կազմավորված Վասպուրական նահանգի տարածքում գոյություն են ունեցել մի քանի վարչաաշխարհագրական միավորներ։ Ուշագրավ է, որ V դարի հայ մատենագիրների երկերում Վասպուրականի տարածքում հաշվում են Անձևացիք, Ռշտունիք, Տոսպ (այս երկուսը միասին երբեմն կոչվել են Տոսպոռշտունիք), Գողթն, Առբերանի և ուրիշ գավառներ։

Այսպիսով, Արտաշիսյանների ժամանակ գոյություն ունեցող արքունի տան սեպուհների տիրություններից բացի (որոնք, ինչպես նշեցինք, պետք է կոչվեին Վասպուրական), հայոց թագավորների կամքով ստեղծվել է գրեթե նույնիրավ Մարդպետական կամ Սեպհական գունդ վարչաաշխարհագրական միավորը, որի գերագույն իրավատերերն էին Մարդպետները, որոնց տոհմը, ինչպես ցույց են տալիս V դարի հայկական աղբյուրները, ամենաազդեցիկն էր Հայաստանում։ Ըստ երևույթին Մարդպետները ունեին թագավորահոր պարտականություններ։ Այս տեսակետից ուշագրավ է Փավստոս Բուզանդի հետևյալ արտահայտությունը. «...Դղակ մարդպետ, որ անուանեալ կոչէր ըստ գործոյն հայր թագաւորին»[22]։ Հատկանշական է, որ նրանք գրեթե միշտ հիշվում են «հայր» վերագիրով։ Հայտնի է, որ թագավորահայրը հույժ ազդեցիկ դեր ուներ միջնադարյան ֆեոդալական պետություններում (հիշենք Կիլիկիայի հայոց թագավորության մեջ թագավորահորը, կամ Վրաց Բագրատունիների պետության աթաբեկին և այլն)։ Անշուշտ, Մարդպետների այդպիսի առաջնակարգ դիրքը հետևանք էր նրանց պաշտոնի։ Նույնիսկ եկեղեցական գործերում առկա էր Մարդպետների վճռորոշող միջամտությունը։ Փավստոս Բուզանդի հավաստմամբ, երբ վախճանվում է հայոց Փառեն կաթողիկոսը, հայերը, կամե-

20 Մովսես Խորենացի, II, ԾԱ, էջ 180—181։

21 Գիրք թղթոց. Թիֆլիս, 1901, էջ 73, 151։

22 Փաւստոս Բուզանդ, V, Զ, էջ 170։

նալով Աղբիանոսի տոհմից ոմն Շահակի դարձնել հայոց հայրապետ, «տան զնա ի ձեռս իշխանին Մարդպետութեան, որում անուն իւր հայր կոչէր»[23]։ Որպես թագավորահայրեր, Մարդպետները մեծ ազդեցություն ունեին երկրի ներսում և հաճախ ուղղություն էին տալիս նրա ներքաղաքական կյանքին։ Փավստոս Բուզանդը վկայում է, որ մարդպետի հորդորանքով Արշակունի հայոց Տիրան թագավորը կոտորել տվեց բազում նախարարների[24]։ Ուշագրավ է, որ Ներսես կաթողիկոսին ձեռնադրելու նպատակով Կեսարիա մեկնած հայ նախարարների մեջ առաջին տեղում հիշվում է մարդպետը՝ «մեծ իշխան» պատվատիտղոսով։ Ճիշտ է, «մեծ իշխան» են անվանվում նաև Մոփաց տերը և Բագարատ սպարապետը, սակայն նրանց մեջ առաջինը մարդպետն է (Մեծ իշխանի ինստիտուտը հարատևեց նաև հետագա դարերում)։ Ընդ որում թե՛ Խորենացու և թե՛ Փավստոս Բուզանդի մոտ կենտրոնախույս ուժերի դեմ անհաշտ պայքար մղողների դերով գրեթե միշտ հանդես էին գալիս Մարդպետները։ Նրանց սադրանքով հատկապես ծանր հաշվեհարդար կատարվեց Վասպուրականի երկու զորեղագույն տոհմերի՝ Արծրունիների և Ռշտունիների նկատմամբ։ Այս հանգամանքը, ինչպես կարելի է դատել ըստ ժամանակակից սկզբնաղբյուրների, հիշյալ տոհմերի և Մարդպետների միջև խորը թշնամանքի դուռ բացեց, որի արտահայտությունն էր, անշուշտ, Շավասպ Արծրունու ձեռքով մարդպետի սպանության փաստը[25]։

Փավստոս Բուզանդի վկայություններից երևում է, որ Արշակ II-ի օրոք մարդպետի իրավասության ոլորտը չէր սահմանափակվում միայն Մարդպետականով, այլ տարածվում էր նաև Տարոնի ու հարակից շրջանների վրա[26]։ Այս հանգամանքը չէր կարող Մարդպետների նկատմամբ չհարուցել հայոց կաթողիկոսի թշնամանքը, քանի որ նույն պատմիչի վկայությամբ, Տարոնը կաթողիկոսի ձեռական (սեփական) տիրույթն էր։ Հարկ է նշել, որ Տարոնի նկատմամբ ևս Մարդպետների իրավասությունը կրել է միայն քաղաքական բնույթ։ Ուշագրավ է, որ Փավստոս Բուզանդը Տարոնի Ոզական ամրոցի տեր է համարում Մամիկոնյան իշխանին։ Անշուշտ, Տարոնը, որպես մարդպետի իրավասությանը ենթակա գավառ, նույնպես պետք է ունենար վերջիններիս տիրույթներին հատուկ բնորոշ արտոնություններ և համապատասխանաբար արքունի ոստանի, սեպհական (կամ վասպուրական) գնդի իրավասություն։ Այս տեսակետից խիստ ուշագրավ է, որ IV—VII դդ. հայոց եկեղեցու պատմությունը շարադրող մի սկզբնաղբյուրում, որը մեզ է հասել հունարեն թարգմանությամբ և հայտնի է Դիեգեսիս անունով, Տարոնի Աշտիշատ գյուղին կից հիշվում է Ասպրակոն անունը («Աշտիշատ գյուղի Ասպրակոնից»)[27]։ Թեև Ժ. Գարիտը կարծում է, թե Ասպրակոնը նույնական է ագարակներ բառին, սակայն, ինչպես ճիշտ կերպով նշել է Մարկվարտը, Դիեգեսիսում հիշվող Ասպրակոնը Վասպուրական անվան հելլենակնացված ձևն է[28]։ Նկատենք, որ Դիեգեսիսի մեջ հիշվում է Ասպրակոնի տարընթերցվածքը՝ Ասպրականոն ձևով[29], ինչը նույնպես վկայում է Ասպրակոն-Վասպուրականի աղերսի մասին։

Վերոշարադրյալից ելնելով, կարելի է կարծել, որ Մարդպետների գերակայությանը ենթակա գավառները օգտվել են արքունի սեպուհներին պատկանող տիրույթների իրավասությունից, որի հետևանքով, ինչպես տեսանք, Մարդպետականը կոչվել է նաև Սեպհական գունդ, ինչը համանշանակ է Վաս-

---

23 Նույն տեղում, III, ԺԷ, էջ 39։

24 Նույն տեղում, ԺԸ, էջ 40—41։

25 Նույն տեղում, IV, ԺԴ, էջ 98։

26 Փավստոս Բուզանդ, էջ 97։

27 G. Garitte. La Narratio de rebus Armeniae, ed., critique et Commentaire.— Corpus Scriptorum Christianorum orientalium, vol. 132. subs., t. IV, Louvain, 1952, p. 27.

28 J. Markwart. Die Entstehung der armenischen Bistümer. Roma, 1932, S. 207.

29 G. Garitte. Un nouveau Manuscrit de "La Narratio de rebus Armeniae".— Le Muséon, Louvain, 1953, p. 251.

պուրականին։ Սրանով պետք է բացատրել Մովսես Խորենացու կողմից Վասպուրական անվան հիշատակումը։ Պատմագրի այդ վկայության մեջ ասվում է. «Եւ։ քանզի զաւակ ոչ գոյր Արտաւազդայ՝ արքա Թողու յԵրախնաւու զամենայն տունն Արտաւազդայ... Զոր սիրեալ արքայի՝ տայ նմա զգահն երկրորդական, զոր ունէրն Արտաւազդ, և զհոգս արևելեան զօրուն ի նա հաւատացեալ՝ առ նմա Թողու զԴրուասպ ոմն պարսիկ զմտերիմ իւր, որ խնամեցեալ էր ընդ նախարարս Վասպուրականի, ուրում տուեալ էր զաւանն Տատեօնս հանդերձ ադարակօքն...»[30]։ Պատմիչի այս խոսքերից կարելի է մակաբերել, որ հայոց թագավորի տիրույթներից ժառանգություն է թողնվել Երախնա։ու իշխանին, որին են վստահվել նաև արևելյան զորքի հոգսերը։ Արևելյան զորք ասելով պատմիչն անշուշտ ի նկատի ունի Հայաստանի՝ Իրանին հարող արևելյան գավառների պաշտպանության գործը կազմակերպող Մարդպետների զորագնդերը։ Ըստ երևույթին Երախնավուն պետք է լիներ Մարդպետների տոհմի ազդեցիկ անդամներից մեկը։ Այն, որ Երախնավուն գլխավորել է Հայաստանի արևելյան կողմերում տեղակայված զորքը, հավանաբար, պատճառ է դարձել, որպեսզի նրա ենթակայության տակ թողնվի Դրվասպ անունով պարսիկ իշխանը։ Սակայն հայոց թագավորը, ինչպես երևում է Մովսես Խորենացու նույն վկայությունից, Դրվասպին վստահել է նաև այն պատճառով, որ նա խնամիական կապեր ուներ Իրանին մոտ ընկած Վասպուրականի նախարարների հետ։ Հարց է առաջանում՝ Վասպուրականի տակ պատմիչը ո՞ր երկրամասը ի նկատի ունի։ Անշուշտ, ոչ հետագայում (591 թ. հետո) կազմավորված Վասպուրական նահանգի տարածքը, որտեղ, ինչպես կտեսնենք ստորև, V դարում եղել են, բացի Խորենացու հիշած Վասպուրականից, նաև այլ միավորներ։ Սակայն Մովսես Խորենացին չի հիշատակում Մարդպետական անունը, թեև խոսում է և՛ Մարդպետների, և՛ նրանց իրավասության, դերի մասին։ Ինչո՞վ կարելի է բացատրել այս փաստը։ Հավանաբար նրանով, որ Մարդպետականի փոխարեն նա գործածել է այլ անուն։ Տվյալ դեպքում այդ անունը պետք է լիներ Վասպուրականը. այդ են հուշում պատմիչի վերոհիշյալ վկայության մեջ եղած տվյալները։ Պատմագրի վկայությունից երևում է նաև, որ Վասպուրականում եղել են ոչ թե մեկ, այլ մի քանի նախարարներ։

Վերևում մենք տեսանք, որ իրոք, բացի Մարդպետներից Մարդպետականում կային նաև նշանավոր այլ տոհմեր (Մարաց յան, Ամատունի, Ակեացի և այլն)։ Բացի այդ, նույն հաղորդումից հավաստվում է, որ Վասպուրականը որոշակի աշխարհագրական և վարչաքաղաքական հասկացություն է, որն ընդգրկում էր ֆեոդալական մի քանի իշխանություններ։ Որ Մարդպետներին վստահվել էր Հայաստանի՝ Իրանին հարող մասերի պաշտպանությունը, վկայում է նաև Փավստոս Բուզանդը, ըստ որի Դղակ (Դղակ) մարդպետը հայոց արքայի կամքով նշանակվել էր «սահմանապահ ի Գանձակ՝ որ էր սահման ընդ Պարս և ընդ Հայս։ Եւ մնաց առ նմա երեսուն հազար ընտիր ընտիրք...»[31]։ Ինչպես տեսնում ենք, Մարդպետներին էր վստահվել Հայաստանի պաշտպանության գործը երկրի այդ կարևորագույն շրջանում։ Ըստ երևույթին, հենց այս հանգամանքի շնորհիվ Մարդպետները ձեռք բերեցին հայոց Արշակունի թագավորների մեծ վստահությունը։ Իրենց հերթին Մարդպետները գրեթե միշտ հավատարիմ էին հայոց Արշակունի թագավորներին։ Բավական է ասել, որ նրանք հետևողականորեն պայքար էին տանում երկրի կենտրոնախույս ուժերի դեմ և հետևում էին Արշակունիների քաղաքական ուղեգծին թե՛ արտաքին և թե՛ ներքին հարաբերություններում։ Սակայն Արտագերս բերդում Փառանձեմ թագուհու պաշարված ժամանակ, եթե հենվենք Փավստոս Բուզանդի հաղորդման վրա[32], մարդպետի վերաբերմունքը հայոց թագուհու հանդեպ դժգոհու-

30 Մովսես Խորենացի, II, ԿԲ, էջ 194։

31 Փավստոս Բուզանդ, V, Զ, էջ 170։

32 Փավստոս Բուզանդի հավաստմամբ, մարդպետը մտել է Արտագերս, Փառանձեմ թագուհու մոտ և խիստ նախատել Արշակունի թագավորներին այն բանի համար, որ նրանք կորցրել

թյուն է հարուցել Պապ թագավորի և իր կողմնակիցների շրջանում։ Այսպես կարծելուն հիմք է տալիս այն հանգամանքը, որ ինչպես նշում է Փավստոս Բուզանդը, Պապի օրոք մարդպետը հիշվում է Մամիկոնյան իշխանից հետո[33]։ Հավանաբար Մարդպետները ընդդիմացել են Պապի քաղաքականությանը, որի հետևանքով վերջինս խիստ սահմանափակել է նրանց իրավունքները։ Այս տեսակետից ուշագրավ է, որ Պապի հրամանով մարդպետը նույնիսկ սպանվել է[34]։

Համաձայն Փավստոս Բուզանդի մեկ այլ տեղեկության, Արշակ II-ի ժամանակ Մարդպետների իրավասության տակ է եղել նաև Անգեղտուն գավառը, որի բերդերի պահպանությունը վստահվել է Դրաստամատին՝ այդ նույն տոհմից[35]։ Ուշագրավ է, որ թեև նույն ժամանակ Աղձնիքի բդեշխը ապստամբել էր Հայոց թագավորի դեմ[36], սակայն Դրաստամատը շարունակեց հավատարմորեն ծառայել հայոց թագավորին։ Ընդ որում Անգեղտուն գավառը նույնպես Փավստոս Բուզանդի մոտ հիշվում է որպես արքունի ոստան[37]։ Ինչպես երևում է, Մարդպետների տիրույթների առանձնաշնորհյալ վիճակը տարածվել է նաև այս գավառի վրա։

Հայտնի է, որ Արշակունիների անկումից հետո Մարդպետների տոհմը վերացավ պատմական ասպարեզից։ Այս տոհմի անդամները, դատելով ըստ ժամանակակից աղբյուրների կցկտուր տվյալների, մտան Արծրունյաց տոհմի հովանավորության տակ։ Թերևս այս է պատճառը, որ Ղազար Փարպեցին 450—451 թթ. ժողովրդաազատագրական պատերազմի ժամանակ Արծրունյաց զորքի հրամանատար Ներշապուհին (Մերշապուհ) անվանում է մարդպետ[38]։ Սակայն պետք է կարծել, որ Մարդպետների իրավասության ոլորտում դրտնվող գավառները պահպանել են իրենց արտոնությունները, արքունի սեփականության իրենց ստատուսը։ Հնարավոր է, որ Արշակունի տոհմի շառավիղները նույնպես պահպանած լինեն նման իրավունքներ։ Որ Արշակունիների սերունդները շարունակել են Հայաստանում գոյատևել նաև 428 թ. հետո, երևում է Եղիշեի վկայություններից։ Այսպես, թվելով Ավարայրի ճակատամարտում զոհվածներին, Եղիշեն հիշում է նաև նրանց մեջ «յարքունի տան» ներկայացուցիչներին[39]։ Ընդ որում պատմագիրը արքունի տան անդամներին հիշում է նաև այլ առիթով՝ կալանված հայ նախարարների մասին խոսելիս։ Ուշագրավ է, որ Եղիշեն Արշակունի շառավիղներին չի հիշում որպես նախարարներ։ Խոսելով Ավարայրի ճակատամարտում զոհվածների մասին, պատմիչն ասում է. «Այս երեսուն և հինգ արք, են որ յաւագ նախարարացն, և են որ ի կրսերագունիցն, սակայն ամենեքեան ըստ մարմնոյ են նախարարազունք, իսկ ըստ հոգևոր առաքինութեանն ամենեքեան երկնային քաղաքացիք։ Եւ բազում ևս այլ ազատ մարդիկ, են որ յարքունի տանէ, և են որ ի տանէ նախարարացն իսկ նոցուն, նիզակակիցք և մարտակիցք քաջ նահատակացն»[40]։

Անշուշտ, ի դեմս արքունի տան և նախարարական տոհմերի ազատների, Եղիշեն ի նկատի ունի Արշակունի և այլ տոհմերի սեպուհներին։ Թե՛ Եղիշեի և թե՛ Ղազար Փարպեցու տվյալներից երևում է, որ Արշակունյաց տոհմի շա-

---

են հայոց աշխարհը, ապա հեռացել է (Փ ա վ ս տ ո ս Բ ու ղ ա ն դ, IV, ԾԵ, էջ 145), որից հետո բերդը հանձնվել է պարսիկներին։

33 Նույն տեղում, V, ԼԳ, էջ 197։

34 Նույն տեղում, Զ, էջ 172։

35 Նույն տեղում, էջ 173։

36 Նույն տեղում, ԺԸ, էջ 178։

37 Նույն տեղում։

38 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի. Տփղիս, 1904, II, ԼԹ, էջ 71։

39 Եղիշէի Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, աշխ. Ե. Տէր-Մինասեան. Երևան, 1957, V, էջ 120։

40 Նույն տեղում, էջ 194։

ռավիղները վճռական դեր չեն ունեցել 450—451 թթ. ազատագրական պատերազմի ժամանակ։ Սակայն այդ պատերազմին նրանց մասնակցության փաստն ինքնին վկայում է (ինչպես և պետք էր սպասել), որ նրանց իրավունքները ևս սահմանափակվել էին Հազկերտ II-ի քաղաքականությամբ։ Ճիշտ է, ստեղծված պայմաններում Արշակունյաց շառավիղները չէին կարող հավակնել իրենց տոհմի թագավորական իշխանության վերականգնմանը, սակայն իրենց իրավունքները պահպանելու միտումը այդ բախտորոշ պահին նրանց մերձեցրեց հայրենասեր ուժերին։ Պետք է կարծել, որ ազատագրական պատերազմից հետո Արշակունյաց սեպուհների իրավունքները հարգվել են սասանյան արքունիքի կողմից։ Այս մասին է վկայում ազատագրական պատերազմից հետո Արշակունիների տոհմի ներկայացուցչին (Արշականին) Հայաստանի մարզպան նշանակելու փաստը։ Իհարկե, սասանյան արքունիքը դրանով չէր կամենում հարություն տալ Արշակունյաց տան երբեմնի զորությանը։ Հավանաբար, այդ քայլը նպատակ ուներ Իրանի արքայի կողմը գրավել Արշակունյաց տոհմի ներկայացուցչին և, հարկ եղած դեպքում, հակադրել նրան Հայաստանի առավել զորեղ նախարարական տոհմերի (Մամիկոնյաններ, Սյունի, Արծրունիներ, Ռշտունիներ և Բագրատունիներ) իշխաններին։ Բացի այդ, V դարի ազատագրական պատերազմից հետո Արշակունյաց տոհմի մնացորդները այն ուժը չէին, որ կարողանային սպառնալիք հարուցել Սասանյանների նկատմամբ։ Հնարավոր է, որ Արշակունիների շառավիղները տիրույթներ են ունեցել նաև Մարդպետականում։ Ի տարբերություն Արշակունիների, Մարդպետների տոհմը Արշակունիների անկումից հետո աղբյուրներում այլևս չի հիշվում։ Ն. Ադոնցը ենթադրում է, թե Թովմա Արծրունու մոտ հիշվող Գուրգեն Ապուպելը Մարդպետներից էր[41], սակայն այդ տեսակետը չի հաստատվում սկզբնաղբյուրներով[42]։ Ղազար Փարպեցին, ինչպես վերը նշեցինք, V դարի կեսերի ազատագրական պատերազմում Արծրունյաց զորքի հրամանատարին՝ անվանում է մարդպետ, հնարավոր է ոչ առանց հիմքի։ V դարում Արծրունիներին ենթակա Մարդպետները այդ բախտորոշ պահին թերևս պետք է հիշեցնել տային իրենց տոհմի երբեմնի փառքը։ Բացի այդ, հնարավոր է, որ Արծրունյաց իշխանության զորաբաժինը Ավարայրի ճակատամարտի ժամանակ իրոք գլխավորել է Մարդպետների տոհմից սերած իշխանը՝ որն, իհարկե, արդեն հանդես էր գալիս Արծրունի տոհմանվան տակ։ Այս առնչությամբ հարց է առաջանում, թե Մարդպետների տոհմի անկումից հետո որ տոհմին են բաժին ընկել նրանց իրավասությանը ենթակա հողատիրությունները։ Ըստ Երևույթին, դրանց մի զգալի մասը անցել է Արծրունիների տնօրինության տակ։ Դրան կարող էր նպաստել Արծրունիների հովանավորությանը Մարդպետների ապավինելու հանգամանքը, ինչպես նաև այդ երկու տոհմերի կալվածքների նահմանակցությունը։ Թերևս կարևոր հանգամանք էր նաև Արծրունիների դերը հայոց Արշակունյաց վերջին թագավորի անմնան գործում։ Ինչպես հաստատում է Մովսես Խորենացին, Հայաստանում հակաարշակունի երկու խմբակցություններից մեկի առաջնորդը Արծրունիներն էին[43]։ Այդ գարանը կարող էր նպաստել, որպեսզի Արծրունիները տեր դառնային Արշակունիների—կողմնակիցների տիրույթների մի մասին։ Այդ հանգամանքն, անշուշտ, կարող էր բարձրացնել Արծրունիների հեղինակությունը։ Ուշագրավ է, որ եթե Ագաթանգեղոսը Արծրունիներին հիշում է հայ նախարարների մեջ վերջին՝ 16-րդ, իսկ Մարդպետներին՝ 3-րդ տեղում, ապա Մովսես Խորենացու մոտ Արծրունիները գրավում են 7-րդ, Մարդպետները՝ վերջին տեղը, իսկ Ղազար Փարպեցու մոտ Արծրունիները 3-րդ տեղում են, այսինքն գրավում են Մարդպետների դիրքը, մինչդեռ Մարդպետները բնավ չեն հիշատակվում որպես տոհմ։ Ավելացնենք

41 Ն. Ադոնց. Պատմական ուսումնասիրություններ. Փարիզ, 1948, էջ 74—75։

42 Այս մասին տես Վ. Մ. Վարդանյան. Արծրունիների պատմության մի քանի հարցեր (IX դարի 30—60-ական թթ.).—«Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 4, էջ 110։

43 Մովսես Խորենացի, III, կե, էջ 350։

թերևս կարելի է հետևեցնել, որ Արծրունիները Արշակունիներից հետո տիրացել են ոչ միայն Մարդպետների հողատիրույթների մի մասին, այլև նրանց բարձակալական (այստեղից նրանց առաջնակարգ տեղը Դահնամակում) իրավունքներին։ Անշուշտ, Մարդպետների գործառնությունը՝ թագավորահոր պարտավորությունը, ինքնաբերաբար վերացավ Արշակունիների անկման հետ։ Եվ եթե այս բնագավառը չժառանգվեց (եթե չկար թագավոր, չէր կարող լինել նաև թագավորահոր գործակալությունը), ապա նույնը չի կարելի ասել Հայաստանի ֆեոդալական աստիճանակարգում Մարդպետների դիրքի, նրանց բարձակալական իրավունքների մասին, որոնց, ինչպես նշեցինք, տիրացել էին Արծրունիները։ Մարդպետների անկումից հետո պահպանվել է Մարդպետական վարչաաշխարհագրական հասկացությունը։ Այս մասին վկայում են «Գիրք թղթոցում» եղած տվյալները[44]։ Ընդ որում տարբեր են Մարդպետականի և Արծրունյաց իշխանության եպիսկոպոսները։ Ուշադրություն է գրավում մեկ այլ հանգամանք։ Մարդպետականի եպիսկոպոսները երբեմն կոչվում են Սեպհական գնդի եպիսկոպոսներ[45], մինչդեռ Արծրունյաց եպիսկոպոսները բնավ չեն հիշվում այդ անվան տակ։ Այս փաստից կարելի է հետևեցնել, որ մինչև 591 թ., երբ Հայաստանը բաժանվեց Իրանի և Բյուզանդիայի միջև, Արծրունիների տիրույթները չընդգրկվեցին Սեպհական գնդի (Մարդպետականի) կազմի մեջ և որ հետագա Վասպուրական նահանգի տարածքի մի զգալի մասն ընդգրկող իշխանությունները շարունակեցին կոչվել Մարդպետական կամ Սեպհական գունդ հավաքական անուններով։ Որքան որ Սեպհական հասկացությունը նույնական է Վասպուրական անվան հետ, ուստի կարելի է կարծել, որ Մարդպետականը կոչվել է ոչ միայն Սեպհական գունդ, այլև Վասպուրական, Վասպուրական գունդ համիմաստ ձևերով։ Ուշագրավ է, որ Սեբեոս պատմիչի մոտ Սեպհական գունդը (կամ Կողմն Սեպհական գնդին) անունը հիշվում է նաև Վասպուրական գունդ ձևով[46]։ Իհարկե, 591 թ. հետո ձևավորված Վասպուրական նահանգը, ինչպես կտեսնենք ստորև, ավելի մեծ տարածություն էր ընդգրկում։ Այս իրողությունը ցայտունորեն երևում է «Գիրք թղթոցի» պարունակած մի քանի տվյալներից։ VI դարի կեսի անցքերի առնչությամբ այդ ժողովածուի մեջ Մարդպետական եպիսկոպոսի հետ կողք-կողքի հիշվում են նաև Արծրունյաց, Ամատունյաց, Պալունյաց, Անձևացյաց իշխանությունների եպիսկոպոսները։ Այդ իշխանությունների զբաղեցրած տարածքները, համաձայն VII դարի աշխարհացույցի, ընդգրկված էին Վասպուրական նահանգի մեջ[47]։ Մինչդեռ, ինչպես պետք է հետևեցնել «Գիրք թղթոցի» վերոնշյալ տվյալներից, հիշյալ իշխանությունները չեն մտել Մարդպետականի կազմի մեջ։ «Գիրք թղթոցի» մեջ եղած այլ տեղեկություններ նույնպես հավաստում են այդ իրողությունը[48]։ Ուշագրավ է նաև այն պարագան, որ թեև Արշակունիների անկումից հետո Մարդպետների տոհմը վերացավ, սակայն նրանց տիրույթները շարունակեցին կոչվել Մարդպետական, ընդհուպ մինչև VII դարը, երբ դրա փոխարեն գործածվեց միայն Վասպուրական անունը։

591 թ. հետո Հայաստանում ծավալված իրադարձությունների առնչությամբ Սեբեոսը, ինչպես նշեցինք վերևում, Վասպուրականը հիշում է Սեպհական գունդ, Կողմն Սեպհական գնդին և Վասպուրական գունդ համանշանակ անուններով։ Սակայն այստեղ նա նկատի ունի ոչ միայն Մարդպետականը, այլև ամբողջ Վասպուրական նահանգը։ Սկզբնապես Սեբեոսը այս անունը հիշում է արաբական զորքի՝ դեպի Հայաստան կատարած առաջին արշավանքի առնչությամբ։ Այդ հաղորդումից իմանում ենք, որ երբ «եկն զաւրն Իսմայելի յԱտրպատական, և բաժանեցան յերիս։ Առաջ մի յԱյրարատ, և առաջ մի

44 Գիրք թղթոց, էջ 41, 73, 147, 151 և այլն։

45 Նույն տեղում, էջ 41, 73 և այլն։

46 Պատմութիւն Սեբէոսի, աշխ. Գ. Վ. Արգարյանի. Երևան, 1979, ԺԲ, էջ 84։

47 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 1983, էջ 108—109։

48 Գիրք թղթոց, էջ 41, 70 և այլն։

ի Սեպհական գնդին կողմանսն, և առաջի մի յԱղուանս։ Արդ՝ որք ի կողմանս Սեպհական գնդին արշաւեալ սփոեցան և հարեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն։ Եւ եկին ժողովեցան ի Հէրեան, և մարտեան ընդ բերդին, և ոչ կաղացին առնուլ։ Եկին ի յՈրդսպու և ոչ նմա ինչ կարացին առնել։ Գնացին անտի և բանակեցան յԱրծափս...»[49]։ Ստացվում է, որ դեպի Սեպհական գնդի կողմերն արշաված արաբական զորաբանակը հայտնվել է Երևանի տակ, որը, ինչպես հայտնի է, Վասպուրականում չէ։ Այս հանգամանքը տեղիք է տվել տարբեր մեկնությունների, որոնց նպատակն է եղել Սեբեոսի հիշատակած յԵրեվանը անպայման փնտրել Սեպհական գնդի կողմերում՝ Վասպուրականում[50]։ Սակայն Սեբեոսի այս և ուրիշ վկայություններից երևում է, որ Սեպհական գնդի կողմն արշաված զորաբաժինը կարող էր Վասպուրականը գրավելուց հետո հասնել Երևան, որը հեռու չէր Վասպուրականի Նախճավան գավառից[51]։ Սեբեոսի նույն վկայությունից երևում է, որ արաբական զորքը ամբողջապես գրավել է Սեպհական գնդի տարածքը, նոր ապա թափանցել Այրարատ։ Այստեղ ծառանում է մեկ այլ հարց. իսկ ի՞նչ էր անում դեպի Այրարատ արշավող զորաբաժինը։ Այս հարցին կարելի է պատասխանել, հենվելով Սեբեոսի մեկ այլ վկայության վրա։ «Իսկ այն զաւրն,— գրում է պատմիչը,— որն ի կողմանս այրարատեան, եհար սրով մինչև ի կողմանս Տայոց, Վրաց և Աղուանից»[52]։ Ուրեմն դեպի Այրարատ արշավող զորքի բուն նպատակը Տայոց, Վրաց և նույնիսկ Աղվանից աշխարհներին տիրելն էր, որից հետո, ըստ Սեբեոսի տեղեկության, այսպես կոչված այրարատյան և Սեպհական գնդի կողմն արշաված զորախմբերը, իրենց առջև դրված խնդիրները կատարելուց հետո, ըստ երևույթին, պետք է միանային Այրարատում։ Եվ իրոք, Տայքը, Վիրքն ու Աղվանքն ասպատակելուց հետո Այրարատի կողմերն արշավող զորքը «էանց ի Նախճաւան առ այն զաւր, որ մարտ եդեալ կռուէին ընդ բերդին Նախճաւանի»[53]։ Նախճաւանը մտնում էր Վասպուրականի մեջ, հետևաբար, նրա պարիսպների տակ մարտեր մղողը պետք է լիներ հենց դեպի Սեպհական գնդի կողմերն արշաված զորքը, որն ինչպես տեսանք, մինչ այդ պաշարել էր Երևանը։ Ուշագրավ է «Սեպհական գնդի կողմանքի» մեկ այլ հիշատակություն Սեբեոսի մոտ։ VI դարի կեսին Բյուզանդիայի Կոստանդին կայսրը զորքով արշավում է Հայաստան՝ կամենալով գրավել այն։ Նրան հպատակություն են հայտնում Սպերի, Մանանաղիի, Դարանաղիի, Եկեղյաց, Կարինի, Տայքի, Բասենի, Վանանդի, Շիրակի, Խորխոռունյաց, Դիմաքսյան տների, Այրարատի տարբեր գավառների իշխանները, որոնք կայսեր իրազեկ են դարձնում «զկամս ապստամբութեան Ռշտունեաց տեառն և փութանակի երթևեկս առ նա դեսպանացն Իսմայելի»[54]։ Ինչպես տեսնում ենք, Վասպուրականի իշխաններից կամ հոգևորականներից ոչ ոք չի հիշվում կայսեր հնազանդվողների մեջ։ Ապստամբ է համարվում Ռշտունյաց տերը։ Ռշտունիքը Վասպուրականի գավառներից էր, որն, ինչպես տեսանք, չէր մտնում «Գիրք թղթոցում» հիշատակված Մարդպետականի կամ Սեպհական գնդի մեջ։ Մինչդեռ Սեբեոսի տվյալներից երևում է, որ 650-ական թթ. Ռշտունիքը, Աղթամարը նույնպես Սեպհական գնդի մասն են կազմել։

---

49 Սեբեոս, ԽԴ, էջ 145։ Սեպհական գնդի և Վասպուրականի նույնության մասին տե՛ս Թ. Խ. Ավդալբեգյան. Հայագիտական հետազոտություններ. Երևան, 1963, էջ 141—147։

50 Թ. Ավդալբեգյան. նշվ. աշխ., էջ 146—147։

51 Թ. Խ. Ավդալբեգյանը (նույն տեղում, էջ 47) կարծում է, որ դեպի Վասպուրական արաբական հիշյալ զորախմբի ռազմուղին պետք է ձգվեր հարավից հյուսիս, սկզբնակետ ունենալով Առեստը։ Սակայն այն փաստը, որ նշված զորամասը դուրս եկավ Ատրպատականից, բացառում է նման հնարավորությունը։ Բացի այդ, Առեստը բերդ չի ունեցել, մինչդեռ Երևանը հիշվում է որպես բերդ։

52 Սեբեոս, ԽԵ, էջ 146։

53 Նույն տեղում։

54 Նույն տեղում, ԽԸ, էջ 165։

Պատմիչը նշում է, որ կայսրը Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ զորք է ուղարկում Սեպհական գնդի կոգմերը, ապստամբ Ոշտունյաց իշխանին պատժելու[55]։ Հետևաբար Ոշտունիքը մտել է Սեպհական գնդի կազմի մեջ։ Հանդամանք, որը վկայում է Սեպհական գնդի սահմանների ընդլայնման մասին։ Քանի որ 591 թ. կազմավորված Վասպուրական նահանգը հիմնականում ընդգրկում էր Սեպհական գնդի (Մարգպետականի) տարածքը, ուստի սկզբնական շրջանում Վասպուրական նահանգը կոչվեց Սեպհական գունդ նամ Կողմն Սեպհական գնդին անունով։ Սասանյան արարական տիրապետության հաստատումից հետո (VII դարի վերջին) այդ անունը կորցրեց իր նշանակությունը։ Նրա փոխարեն օգտագործվեց Վասպուրական անունը (VII դարի Աշխարհացույցում Սեպհական գունդ անունը չի հիշվում)։

ИЗ ИСТОРИИ ВОЗНИКНОВЕНИЯ АДМИНИСТРАТИВНО-ГЕОГРАФИЧЕСКОЙ ЕДИНИЦЫ ВАСПУРАКАН

В. М. ВАРДАНЯН

Резюме

Свидетельства источников дают основание полагать, что Васпуракан как географическое и административное понятие существовал в эпоху Арташесидов, когда провинции Алновит, Арберани и Аштянк считались царскими доменами, где утверждали членов царского рода (*сепухов*). Поэтому эти провинции могли называться Сепухаканом, или Васпураканом, в отличие от других регионов. Привилегиями царских сепухов («востан азатутюн») пользовались и члены рода Мардпетов, а также и зависимые от них князья. Соответственно их владения называли собирательными именами—Сепакап гунд, Мардпетакан, Васпуракан. При этом Мардпетакан не был собственностью одного рода, но состоял из владений нескольких родов. Над этими владениями Мардпеты не имели феодального сюзеренитета и лишь политически объединяли князей данного региона для выполнения своей функции—обороны восточных границ Армении. Возможно, в определенный период провинции Алновит, Арберани и Аштянк были включены в состав Сепакан гунда, или Мардпетакана, так как Мардпеты пользовались большим влиянием и, вероятно, имели политический сюзеренитет также над владениями царских сепухов. Васпуракан, упоминаемый у Мовсеса Хоренаци, идентичен Сепакан гунду, или Мардпетакану. Однако его территория была более ограниченной по сравнению с областью Васпуракан, представленной в армянской географии VII века. Даже в середине VI в. Рштуник, Андзевацик, владения Арцрунидов и других родов фигурируют отдельно от Сепакан гунда, или Васпуракана (Мардпетакана), между тем все эти земли после 591 года входили в состав Васпураканской области. Но так как основную часть области Васпуракан составляли провинции, входившие в Сепакан гунд, Васпураканская область в начальный период называлась Сепакан гундом, или Васпуракан гундом. Имя Мардпетакан сохранилось лишь в религиозной сфере: церковь бывшего Сепакан гунда, или Мардпетакана, вплоть до X в. называлась именем Мардпетакан и упоминается отдельно от других епископств.

---

55 *Նույն աեղում, էջ 146։*